(«Իսահակյանը բնության երգիչ»), Ա. Եղիազարյանը («Իսահակյանի բառի պոետիկան»), Ս. Ամիրյանը («Իսահակյանը և Ուկրաինան»)։

Նստաշրջանում ելույթներ ունեցան նաև վրաց գրականագետ Բ. Արվելաձեն և բանասիրական գիտությունների դոկտոր Մ. Սեյիդովը (Բաքու), որոնք խոսեցին Վրաստանում և Ադրբեջանում Իսահակյանի արվեստի մասնայականության, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով կատարված նրա ստեղծագործությունների թարգմանությունների, ինչպես նաև վրացական և ադրբեջանական գրականությունների հետ Իսահակյանի ունեցած կապերի մասին։

* * *

Հոկտեմբերի 14—16-ը Երևանի պետական համալսարանում կայացավ Ավետիք Իսահակյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական նստաշրջան։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց համալսարանի ռեկտոր՝ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։

— Հայ ժողովուրդը,— ասաց նա,— մեր մեծ հայրենիքի եղբայրական ժողովուրդների և ամբողջ աշխարհի բարի կամքի տեր մարդկանց հետ տոնում է իր հոգևոր մշակույթի նշանավոր տոներից մեկը՝ անմահ Իսահակյանի ծննդյան 100-ամյակը։ Հանճարեղ բանաստեղծը հայ բազմադարյան գրականության փայլուն գագաթներից մեկն է։ Հսկայական է նրա դերը հայ նոր գրականության զարգացման գործում։ Իսահակյանն իր կյանքով ու գործունեությամբ ներկայանում է որպես բարոյաքաղաքական ոգու մեծության, ազնվության և վեհության մի պայծառ օրինակ։ Նա գեղարվեստորեն մարմնավորեց իր ժողովրդի հոգևոր աշխարհը, նրա իդեալներն ու ձգտումները, մարդասիրական խոհերը։

Իսահակյանի ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Մկրյանը։

— XIX դարի վերջում և XX դարի սկզբում հայ պոեզիան զարգացման մի աննախընթաց շրջան ապրեց,— ասաց նա։— Այդ ժամանակամիջոցում իրենց ստեղծագործությամբ հրապարակվեցին ու լայն ժողովրդականություն ձեռք բերեցին Թումանյանը և Իսահակյանը, Միսամանթոն ու Վարուժանը, Մեծարենցն ու Տերյանը։ Իսահակյանը գրական հռչակի հասավ միանգամից՝ իր առաջին «Երգեր ու վերքեր» բանաստեղծությունների ժողովածուով։ Նրա ժողովրդականությունն անշեղորեն մեծացավ իր կյանքի տարիների հետ, որովհետև նրա հումանիզմը և հայրենասիրությունը գնալով ավելի էին խորանում, ստեղծագործությունը ավելի ու ավելի իմաստուն և գեղարվեստորեն հմայիչ էր դառնում։ Բանաստեղծը հայ գրականությանը պարգևել է գեղարվեստական այնպիսի կոթողներ, որոնք կրում են հանճարի անջնջելի դրոշմը։ Հանդես գալով ազգային ազատագրության ժամանակաշրջանում, Իսահակյանը անսահման հավատով փառաբանեց գալիք լուսավոր օրերը։

Գիտական նստաշրջանում զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Է. Ջրբաշյանը («Իսահակյանի բնարական հերոսը»), բանասիրական գիտությունների դոկտորներ Գ. Հովհաննիսյանը («Պատկերի կառուցվածքը Իսահակյանի բանաստեղծություններում»), Հ. Թամրազյանը («Բանաստեղծը և իր դարը»), պատմական գիտությունների դոկտոր Հ. Ֆեյեքյանը («Իսահակյանը հրապարակախոս»), բանասիրական գիտությունների թեկնածուներ Ռ. Իշխանյանը («Իսահակյանի ստեղծագործության լեզվական զարգացումը»), Մ. Ջանփոլադյանը («Ավ. Իսահակյանի «Լիլիթը») և Ավիկ Իսահակյանը («Ավ. Իսահակյանի ծոցատետրային աֆորիզմները»)։

Հ. ԱԲՐՈՆՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՎ ԼԵՀ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ 1975 թ. հոկտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 2-ը Սուխումի քաղաքում անցկացվեց սովետական և լեհ պատմաբանների հերթական գիտական նստաշրջանը, որը նվիրված էր «Արևելյան Եվրոպայի և Մերձսևծովյան երկրների քաղաքական փոխհարաբերությունները XV դարից մինչև XVIII դարի սկզբները» պրոբլեմին։

Սովետական և լեհ պատմաբանների ամենամյա համատեղ նստաշրջաններ անց են կացվում արդեն շուրջ 10 տարի՝ հաջորդաբար ՍՍՀՄ-ում և Լեհաստանում։ Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին Մոսկվայի, Քիշինևի, Երևանի, Վիլնյուսի, Մինսկի, Լվովի, Սարատովի, Թբիլիսիի, Խարկովի, Սուխումիի, ինչպես նաև Վարշավայի, Պոզնանի, Կրակովի և Լոձի յոթանասունից ավելի պատմաբաններ։ Ընթերցվեց 40 զեկուցում։ Նստաշրջանում, պլենար նիստերից բացի, գումարվեցին նաև բաժանմունքների նիս-

տեր, որոնցից մեկում քննարկվեցին աղբյուրագիտական, մյուսում՝ պատմագիտական բնույթի զեկուցումներ։

Նստաշրջանը բացվեց կազմկոմիտեի նախագահի տեղակալ, պրոֆ. Ի. Ի. Կոստյուչկոյի համառոտ խոսքով։ Պլենար նիստում մեծ հետաքրքրությամբ լսվեց Լ. Բազիլի (Վարշավա) զեկուցումը, որը նվիրված էր XVI դարի լեհ-թուրքական դիվանագիտական հարաբերություններին։ Հիմնականում կանգ առնելով Լեհաստանի և Օսմանյան կայսրության միջև դիվանագիտական հարաբերությունների սկզբնավորման և զարգացման խնդիրների վրա, զեկուցողը խոսեց նաև թուրքական ագրեսիայի ուժեղացող վտանգի պայմաններում Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում և, մասնավորապես, Լեհաստանում ստեղծված քաղաքական խառը վիճակի և այն միջոցառումների մասին, որոնք մշակվում էին այդ վտանգը չեզոքացնելու և թուրքերի դեմ համատեղ պայքար կազմակերպելու համար։ Լ. Վ. Ցերեպնինը (Մոսկվա) զեկուցեց թուրքական տիրապետության տակ տվայտող Ադոլի բնակչությանը օգնություն ցույց տալու, հարավ-ռուսական այդ քաղաքը թուրքական լծից ազատագրելու պլանների մասին, որոնք մշակվել էին 1642 թ. գումարված «Համերկրային ժողովում»։ Լ. Ն. Սեմյոնովան (Քիշինև) հանդես եկավ «XV դարի վերջի մոլդավա-լեհ-թուրքական հարաբերությունների պատմությունից» զեկուցմամբ, որի մեջ հետաքրքրական տեղեկություններ բերեց Լեհաստանի և Թուրքիայի հետ Մոլդավական իշխանության ունեցած քաղաքական փոխհարաբերությունների վերաբերյալ։ Ի. Պ. Սուտարոստինայի (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր XV դարում Լիտվայի Մեծ Իշխանության կազմում եղած հին սլավոնական երկրների իրավական զարգացման յուրահատկությունների հարցին։ Ա. Դեյշտուր (Վարշավա) զեկուցեց Հարավ-Արևելյան Եվրոպայում Ռեչ Պոսպոլիտայի վարած քաղաքականության մասին։ Վ. Հենզելի (Վարշավա) զեկուցման մեջ քննության էին առնված Լեհաստանից ու նրա կազմում եղած երկրներից XVI—XVII դդ. թուրք-թաթարական արշավանքների ընթացքում գերի տարվածների իրավական վիճակի, փրկագնման պայմանների ու դրա իրականացման հետ կապված մի շարք հարցեր։ Ա. Պ. Գրիցկևիչը (Մինսկ) «Բելոռուսական հողերն ու Ղրիմի խանությունը XV—XVI դդ.» զեկուցման մեջ ուշադրավ նյութեր հրապարակեց Բելոռուսիայի վրա թուրքերի դրդումով Ղրիմի թաթարների կատարած հարձակումների վերաբերյալ։ Վ. Սերչիկի (Կրակով) զեկուցման թեման էր՝ «Ռեչ Պոսպոլիտան և կազակությունը XVII դարի առաջին երկու տասնամյակներում»։

Նստաշրջանում ներկայացված զեկուցումների մի զգալի մասը նվիրված էր թուրք-թաթարական ագրեսիայի դեմ սլավոնական ժողովուրդների մղած դարավոր պայքարի պատմության տարբեր կողմերին։ Ի. Ն. Ֆլորյայի (Մոսկվա) զեկուցման մեջ շոշափված էր 1556—1560 թթ. Ռուսաստանի և Լիտվական Մեծ Իշխանության միջև հակաթուրքական կոալիցիա ստեղծելու ծրագրերի հարցը։ Վ. Ա. Արտամոնովը (Մոսկվա) խոսեց 1709—1714 թթ. Ռուսաստանի, Ռեչ Պոսպոլիտայի և Թուրքիայի միջև ստեղծված բաղաքական հարաբերությունների մասին։ Ի. Վ. Գալակտիոնովի (Սարատով) զեկուցման թեման էր՝ «Ռուսաստանը և Լեհաստանը 1666—1667 թթ. թուրքական ագրեսիայի դեմ-հանդիման», Լ. Վ. Ղաբրովսկուները (Մոսկվա)՝ «Ղրիմի հարցը Ռուսաստանի և Ռեչ Պոսպոլիտայի արտաքին քաղաքականության մեջ XVII դարի 40—50-ական թթ.»։ Պ. Վ. Սովետովը (Քիշինև) պատմեց թուրքական լծից ազատագրվելու նպատակով դանուբյան իշխանությունների՝ Ռուսաստանի և Ռեչ Պոսպոլիտայի տիրապետության տակ անցնելու ծրագրերի մասին (XVII դար—XVIII դարի սկզբներ)։ Յու. Գերովսկու (Կրակով) զեկուցումը նվիրված էր Լեհաստանի ու Սաքսոնիայի միջև կայացած միության ժամանակ Թուրքիայի նկատմամբ Լեհաստանի վարած բաղաքականությանը։ «Ռուսական պետության հարավային սահմանների պաշտպանության կազմակերպումը XVI—XVII դդ.» հարցի շուրջ զեկուցեց Վ. Ա. Ալեքսանդրովը (Մոսկվա)։ XVII դարի լեհ-ուկրաինական և ուկրաինա-մոլդավական հարաբերություններին էին նվիրված Վ. Սերչիկի (Կրակով) և Ն. Ա. Սոխովի (Քիշինև) զեկուցումները։

Աղբյուրագիտական բաժանմունքի նիստերում լսված զեկուցումներն ու հաղորդումները գլխավորապես վերաբերում էին ՍՍՀՄ-ի, Լեհաստանի ու այլ երկրների դիվանատներում պահվող ձեռագիր սկզբնաղբյուրներին, ինչպես և տպագիր նյութերին, որոնք հարուստ տեղեկություններ են պարունակում քննարկման դրված հիմնական պրոբլեմի վերաբերյալ։ Այդ բնույթի ամենաուշագրավ զեկուցումներից էր Ա. Ռ. Սմիրնովի (Մոսկվա) «XVI—XVII դդ. դեսպանական գործերի ցուցակը որպես թուրքիայի ու Ղրիմի արևելա-եվրոպական բաղաքականության պատմության սկզբնաղբյուր» հաղորդումը։ Շ. Ֆ. Մուխամեդյարովը (Մոսկվա) վեր հանեց Արևելյան Եվրոպայի և Մերձսևծովյան երկրների XVI—XVII դդ. փոխհարաբերությունների ուսումնասիրման համար թաթար խանների յարլիկների ունեցած նշանակությունը։ Մ. Ե. Բիչկովան պատմեց XVI դարի տոհմագրական գրականության մեջ ռուսական պետության ու Լիտվայի բաղաքական կապերի արտացոլման մասին։ Կարդացվեցին նաև այլ զեկուցումներ, որոնցից

հատկապես հետաքրքրական էին Ն. Մ. Ռուսսկի (Քիշինև) զեկուցումը Մոլդավիայի լեհական կողմնորոշման պայմաններ՝ XVI դարի տարեգիրներ Գ. Ուրեկիեի ու Մ. Կոստինի և, ընդհանրապես, թուրքական լծից ազատագրվելու համար մոլդավական ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին և Ի. Բ. Բուեկովի (Մոսկվա) «Օսմանյան կայսրության և Ղրիմի խանության արևելա-եվրոպական քաղաքականության որոշ տենդենցներն ըստ XVII դարի մի քանի ստեղծագործությունների» զեկուցումը, որի հեղինակը բնութագրեց Մոսկվայի հզորության վերականգնման կողմնակից, XVII դարի հույն պատրիարք Արսենիի և նրա գաղափարական հակառակորդ, թուրք պատմիչ Է. Չելեբիի հայացքները։

Գիտաժողովում հատուկ ուշադրություն նվիրվեց Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների ու առաջին հերթին Լեհաստանի հետ կովկասյան և անդրկովկասյան ժողովուրդների ունեցած պատմական կապերի ու բարեկամության խնդրին։ Զ. Վ. Անչաբաձեի (Սուխումի) զեկուցման մեջ բննության էր առնված Մերձսևծովյան և Արևելյան Եվրոպայի երկրների քաղաքական փոխհարաբերություններում Կովկասի ժողովուրդների խաղացած դերի հարցը։ Վ. Կ. Ոսկանյանի (Երևան) «Ռուս-լեհ-հայկական համագործակցությունը XVII դարում» զեկուցումը նվիրված էր նշված ժամանակաշրջանում նոր զարգացում ստացած հայ-ռուսական և հայ-լեհական քաղաքական ու տնտեսական կապերի, հայ ազատագրական շարժման աշխուժացման և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորման հետ կապված հարցերին։ Բ. Բարանովսկին (Լոմ) խոսեց XVII դարում և XVIII-ի սկզբում Լեհաստանի հետ կովկասյան ու անդրկովկասյան ժողովուրդների քաղաքական և առևտրական կապերի, լեհական արհեստների վրա Կովկասի թողած ազդեցության, Կովկասի մասին լեհ հասարակայնության ունեցած տեղեկությունների և Կովկասից դուրս եկած ու Լեհաստանում հաստատված էմիգրանտների մասին։ Նրա զեկուցման մեջ արծարծվեցին նաև Լեհաստանի կյանքում հայերի խաղացած դերի հարցերը։ XVI—XVII դդ. հայ-լեհական մշակութային կապերի մասին զեկուցումով հանդես եկավ Ջ. Օ. Դալստյանը (Երևան)։ Մ. Խ. Սվանիձեի (Թբիլիսի) զեկուցման թեման էր «Վրաստանը, Մերձսևծովյան երկրները և Արևելյան Եվրոպան XVII դարի առաջին կեսում»։ Ժ. Ա. Անանյանը զեկուցեց Ռուսաստանի արևելյան քաղաքականության ու անդրկովկասյան ժողովուրդների քաղաքական փոխհարաբերությունների մասին (XVIII դարի 20-ական թթ.)։ Գ. Ա. Զիձարիան (Սուխումի) հանդես եկավ «XIX դարի 20—30-ական թթ. լեհական ազատագրական շարժման մասնակիցները Կովկասի սևծովյան ափում» զեկուցմամբ։

Գիտաժողովում ընթերցված զեկուցումները ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս է ընծայելու առանձին գրքով։

Սովետական ու լեհ պատմաբանների հերթական նստաշրջանը դումարվելու է 1976 թ. Կրակովում։

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ